



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆԱԿԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com)



**ԱՌԱՋՆՈՐԴ ՄՐԲԱԶԱՆ ՀՅՐ ԱՄԱՆՈՐԻ ԵՒ Ս. ԾՆՆԴԵԱՆ ՊԱՏԳԱՄԸ**

**ԲԵԹՂԵՅԵՄԻ ՓԱՅԼՈՒՆ ԱՍՏՂԸ**  
**ԴԱՐՁԵԱԼ ԿԸ ԼՈՒՍԱԴՈՐԷ ՄԵՐ ԿԵԱՆՔԸ**

21 դարեր առաջ, լուռ ու սուրբ գիշեր մը, Բեթղեհեմի մօտակայ դաշտի մը մէջ իրենց հօտերուն պահպանութիւն ընող խումբ մը բարի հովիւներ հրաշալի երեւոյթի մը դիմաց գտնուեցան. երկինքի բազում աստղերուն շարքին, անոնք տեսան արտակարգօրէն փայլուն աստղ մը, որ ծագած էր մօտակայ գիւղի համեստ բնակարանին վերեւ: Նոյն պահուն Հրեշտակներու մեղմանոյշ երգերով համայն աշխարհը կը ստանար Աստուածայայտնութեան հրաշափառ Աւետիսը.

**«Փառք ի բարձունս Աստուծոյ,  
 Եւ յերկիր խաղաղութիւն  
 Ի մարդիկ հաճութիւն...»**  
 (Ղուկ. 2:14)

Մարգարէներու կողմէ կանխագուշակուած մարդոց փրկութեան Աստուծոյ խոստումը կ'իրագործուէր, Աստուածորդի մանուկ Յիսուսի ծնունդով: Արդարեւ, Աստուած կը մարմնանար ու կը մարդանար մեզ աստուածացնելու, կատարելութեան ճամբաներէն առաջնորդելու:

Իր Միածինը աշխարհի ղրկելով, մարդուն ստեղծիչն ու Հայրը իր ամենասիրելի արարածին հետ կը վերանորոգէր ուխտ մը, անոր տալով խաղաղութեան, սիրոյ ու հաճութեան Աւետիսը: Աստուած մանկանալով աշխարհի կ'այցելէր՝ մարդու կեանքին յուսատու ապագայի մը նոր սկիզբ մը տալու: Ան որ Անիմանալի Աստուծոյ պատկերն ըլլալով՝ զգեցաւ պատկերը մարդուն, որպէսզի մարդը կարենայ իր մէջ վերստեղծել «**Անտեսանելի Աստուծոյ պատկերը**» (Բ. Կորնթ. 4:4, Կող. 1:15):

Յիսուս Մանուկի ծննդեան պայմաններն իսկ ապացոյց էին վերանորոգեալ կեանքի Աւետիսին: Արդարեւ, Աստուածորդին փարթամ պալատներու մէջ չծնաւ, իշխանական ընտանիքի մը յարկին տակ իր երկրաւոր աչքերը չբացաւ, այլ՝ աղքատիկ մսուրի մը մէջ աշխարհին պարգեւ-ընծայ եղաւ: Անոր աշխարհի մուտքին առաջին աւետիսը կը հասներ համեստ ու աղքատիկ մարդոց՝ բարի հովիւներուն, որոնք անմիջապէս ճամբայ կ'ելլէին դէպի մսուր, աւետաբեր վկաները դառնալու

ծննդեան մեծ եւ հրաշալի խորհուրդին: Իսկ արեւելքի հարուստ ու իմաստուն մոգ-թագաւորները՝ Մելքոն, Գասպար եւ Պաղտասար, փայլուն աստղին առաջնորդութեամբ, հեռաւոր երկիրներէ Բեթղեհեմ կը հասնէին, խոնարհելու եւ թանկագին ընծաներ մատուցելու համար նորածին Մանուկին, որ կոչուած էր ըլլալու մարդկութեան Փրկիչը: Ծնեալ Յիսուս-Փրկիչով աշխարհ պիտի վերանորոգուէր: Մեղքի, մահուան եւ խաւարի մէջ շղթայուածներ՝ ազատութիւն, առաւել կեանք եւ փրկութիւն պիտի ստանային: «**Խաւարի մէջ պտղտող ժողովուրդը մեծ լոյս տեսաւ, մահուան ստուերին երկիրը բնակողներուն լոյս ծագեցաւ**» (Եսայի 9:2): Արդարեւ, պարզունակ ու բարի հովիւներ եւ իմաստուն մոգեր՝ տարբեր ճամբաներով միեւնոյն մանկացեալ Յիսուս-Աստուածը կը գտնէին:

\*\*\*

Բեթղեհեմի երկնակամարին ներքեւ ծագած փայլուն աստղը՝ ահաւասիկ 21 դարերէ ի վեր կը շարունակէ լուսաւորել աշխարհի երկնակամարը, հակառակ զայն մթազնելու փորձող չարիքի ալիքներուն:

21 դարեր ետք, շարականագիրին բառերով՝ «**մեծ եւ սքանչելի խորհուրդը**» կը շարունակէ յուսադրել, ներշնչել ու իմաստաւորել մարդկութեան կեանքը, միտքն ու հոգին, շարունակ պատգամելով՝ առաջնորդուիլ բարիով, սիրով, արդարութեամբ ու խաղաղութեամբ:

Քրիստոսի երկրաւոր առաքելութենէն 21 դարեր ետք, բազմաթիւ հերովդեսներ փորձած են խափանել Արդարութեան Արեգակին լոյսը, սակայն ինչպէս առաջին Յերովդեսի փորձը, նոյնպէս ալ անոր բոլոր հետեւորդներուն ճիգերը մնացած են ապարդիւն:

Բեթղեհեմի մտւորին ճամբով աշխարհ եկող «**Նոր Արքային**» երկրաւոր առաքելութիւնը եղաւ կարճատեւ, սակայն մարդուն անոր թողած ժառանգութիւնը եղաւ այնքան հարուստ եւ Սիրոյ Նոր Կեանքի ուսուցում-վարդապետութիւնը՝ թանկարժէք, որ յեղաշրջեց աշխարհն ու մարդկային կեանքը: Արդարեւ Բեթղեհեմի Աստղը եղաւ կեանքի անսպառ ուղեցոյց, արդարութեան ճանապարհ եւ ճշմարտութեան դուռ՝ մարդը վերանորոգելու, զինք Աստուծոյ սիրոյն մէջ հաստատելու եւ պարգւելու աւելի կատարեալ, արդար, խաղաղ ու երջանիկ կեանք մը:

Աստուածորդւոյն պատգամներուն եութիւնը մնացած է անփոփոխ. համեստութեան, սիրոյ, խաղաղութեան ու մարդոց միջեւ հաճութեան անոր պատգամը այսօր նոյնքան ազդու կը հնչէ, որքան հաւատքի ու քրիստոսահիմն եկեղեցւոյ համար նուիրաբերելու այն թելադրանքը, որ իր առաջին արտայայտութիւնը գտաւ մանուկ Յիսուսի առջեւ խոնարհող իմաստուն մոգերուն ընծայաբերումով:

Մենք՝ հայերս, այս բարիքներով երախտապարտ ու հարուստ զգալու ամէն պատճառ ունինք, ոչ միայն անոր համար, որ եղած ենք Աստուածորդւոյն հաստատած կրօնքը իբրեւ պետութիւն ընդունող առաջին ժողովուրդը, այլ մանաւանդ անոր համար, որ մեր ժողովուրդի ամբողջ պատմութիւնն ու ստեղծագործութիւնները եղած են մարմնաւորումը քրիստոնէական մեր հաւատքին, որ միաձուլուած է մեր ազգի եութեան ու նկարագիրին հետ:

Սիրելիներ,

Մարդը՝ Արարիչին ամենէն սիրելի ձեռակերտը այսօր ալ կոչուած է հաւատարմօրէն քալելու Աստուածայայտնութեան խորհուրդով բացուած լուսաւոր ուղիէն: Սիրոյ, հանդուրժողութեան, համեստութեան ու նուիրաբերումի անժամանցելի պատգամները այսօր ալ նոյն ուժգնութեամբ կը հնչեն ու պետք է հնչեն մեր սեփական ընտանիքներու յարկին տակ, մեր հաւաքական ընտանիքներու շրջանակին մէջ, հաւաքական այդ ընտանիքները ըլլան միութիւն, կազմակերպութիւն, հայրենիք թէ ամբողջ աշխարհը:

Աստուածային պատգամներէն շեղումը, խաղաղութեան գիտութեան առաքելութենէն դասալքութիւնը միայն չարիք ու դժբախտութիւն կը բերեն մարդուն, ինչ մակարդակի վրայ ու շրջագիծի մէջ ալ դիտենք զայն: Ընտանիքներ կը քայքայուին, մարդկային ընկերութիւններ ու երկիրներ կը քանդուին առանց սիրոյ ու նուիրաբերումի ոգիի, միջոցաւ սերն ու մարդոց միջեւ հաճութիւնը կ'ամրացնեն ամենէն փոքր ու համեստ տնակին հիմերն անգամ:

Իբրեւ հաւատացեալ քրիստոնէաներ՝ մենք ամէն օր բազմաթիւ պատճառներ ունինք փառք ու գոհութիւն տալու Աստուծոյ, մեզի պարգեւած բարիքներուն համար: Սակայն Ամանորն ու Ս. Ծննդեան տօնը բացառիկ այն առիթներն են, երբ պետք է պահ մը կանգ առնենք խոկումով, մեր անձերուն հետ հաշուեյարդար կատարելու կամքով, սակայն նաեւ Յիսուս Մանուկի ծննդեան Աւետիսով մեզի տրուած անբաւելի հաճութեամբ ու գոհունակ սիրտով, որպէսզի ոչ միայն յիշենք Ամենաբարին Աստուծոյ հետ մեր ուխտը, այլ մանաւանդ իր կամքը երկրի վրայ իրագործելու պատրաստակամութիւնը, հոգեպէս վերաթարմանանք եւ մեր կեանքերը ապրինք աստուածահաճոյ ու ծառայական ընթացքով:

Ա՛յս կը պատգամէր Աստուածայայտնութեան խորհուրդը երէկ:

Ա՛յս կը թելադրէ Ս. Ծննդեան տօնը՝ այսօրուան ու վաղուան մարդուն:

\*\*\*

Ամանորի եւ Ս. Ծննդեան տօներուն առիթով, մեր աղօթքն ու բարի մաղթանքն է, որ Երկնաւոր Յայրը մարդկութեան հոգիներուն, սիրտերուն ու կեանքերուն մէջ շարունակէ առատօրէն շաղ տալ իր բարիքները, աշխարհն ու մարդկութիւնը գերծ պահէ Չարին փորձութիւններէն, պատերազմներէ ու պատուհասներէ, հայութեան ու մեր հայրենիքին պարգեւէ բարօրութիւն ու բարգաւաճում: Օրինաբեր այս տօներուն որդիական սիրով կը շնորհաւորենք մեր գոյգ հայրապետները՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Յայոց եւ Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսները, մաղթելով քաջամողջութիւն եւ ընդ երկար արդիւնաշատ տարիներ: Յայրենի պետութեան ղեկավարութեան՝ արեւշատութիւն, իմաստութիւն եւ ժողովրդանուէր ծառայութիւն: Մեր սրտագին բարեմաղթութիւնները կը փոխանցենք նաեւ Թեմիս հոգեւորական դասուն, Ազգային Իշխանութեան, Երեսփոխանական Ժողովին, մեր եկեղեցիներու հոգաբարձական կազմերուն, կրթական մեր մշակներուն, կազմակերպութեանց, հաստատութեանց եւ մարմիններու ներկայացուցիչներուն, եւ պատուական մեր հաւատացեալ ժողովուրդին, բարերարներուն, աղօթելով եւ մանկացեալ Փրկչէն խնդրելով աշխարհիս սեր եւ խաղաղութիւն, ազգային ու եկեղեցական ծրագիրներու եւ ամէն բարի գործերու յաջողութիւն:

Թող բոլորին Ամանորն ու մանկացեալ Փրկչին Շնունդն ու Աստուածայայտնութիւնը ըլլան շնորհաւոր, լուսաւորեն եւ առաջնորդեն մեր անհատական, ընտանեկան ու ազգային հաւաքական կեանքը:

***Շնորհաւոր Նոր Տարի բոլորիդ  
Քրիստոս Ճնաւ եւ Յայտնեցաւ,  
Օրհնեալ է յայտնութիւնն Քրիստոսի:***

Սիրոյ շերմ ողջունիւ՛

Մուշեղ Արք. Մարտիրոսեան,  
Առաջնորդ Ա. Մ. Ն. Արեւմտեան Թեմ

Ամանոր եւ Ս. Շնունդ, 2007

***Prelate's New Year and Christmas Message***

**THE BRIGHT STAR OF BETHLEHEM  
ONCE AGAIN ILLUMINATES OUR LIVES**

Twenty-one centuries ago, shepherds that were herding their sheep on a silent and holy night in a field near Bethlehem witnessed a miraculous sight; among the multitude of stars in the night sky, they saw an unusually bright star shining above a humble dwelling in a nearby village which proclaimed to them and to the world the good tidings of the angels' songs:

**“Glory to God in the Highest  
And on earth Peace  
Goodwill toward men...”**

(Luke 2:14)

The prophets' foretelling of God's promise to save mankind was transpiring with the Glorious Birth and Epiphany of our Lord, Jesus Christ, the Son of God. Indeed, God had become man to guide us in the path of righteousness.

By sending His only begotten Son, God sent mankind the tidings of peace, love, and goodwill, and the promise of a new beginning for a hopeful future. He who is the

image of the invisible God took the form of man so that man may recreate himself in the **“likeness of God”** (2 Corinthians 4:4, Colossians 1:15).

The circumstance of the Nativity in itself was evidence of the tiding of renewed life. He was not born in a luxurious palace or in a royal family, but rather in a humble manger. Similarly, the news and message of Birth of Jesus reached the humble and poor, and the good shepherds who immediately set out towards the manger to be the witnesses who would bear the good news of the miraculous Birth of our Savior. In addition, the three wise men of the East, Melchior, Caspar, and Balthazar, guided by the bright star, traveled to Bethlehem from afar to offer gifts to the infant Jesus who would be the Savior of mankind. Through Jesus, the world would be renewed, and those condemned to sin, death, and darkness would receive salvation. **“The people who walked in darkness have seen a great light; those who dwelt in a land of deep darkness, on them has a light shined”** (Isaiah 9:2).

For twenty-one centuries, the bright star that shined above Bethlehem continues to illuminate the world, despite efforts to extinguish it.

Twenty-one centuries later, the **“Great and Marvelous Mystery”** of the Birth of our Savior continues to offer hope, inspiration, and meaning to our lives, minds, and spirits, and guides us towards goodness, love, righteousness, and peace.

Twenty centuries after Jesus’ mission on earth, countless attempts to obliterate the Sun of Righteousness have been made, however they have all been futile just like the first attempt by King Herod.

The earthly ministry of the “New King” was brief, however the heritage He left mankind is so rich and His teachings and doctrine so valuable that it has transformed our world and lives. The star of Bethlehem became and continues to be the source of eternal life, the path of righteousness and truth, to renew the human race and to grant mankind a more fulfilling, just, and peaceful world.

The spirit of the message of Jesus has endured for centuries. The messages of humility, love, peace, and goodwill toward man remain as relevant to us today as in the days of the magi who humbled themselves before the infant Jesus and offered Him gifts.

We, as Armenians, should be grateful not only because we were the first nation to officially accept Christianity but more so because our entire history and achievements have been the embodiment of our Christian faith, which is integrated in our national identity and character.

Dear Loved Ones,

Man is still called on by God today to follow faithfully in the path established by the Mystery of Epiphany. Today, the timeless messages of love, tolerance, humility, and devotion resound in our individual and collective lives.

Straying from the path of God and deserting the mission of Christ and His Gospel leads only to misfortune. Absence of love and devotion can lead to the destruction of

families, friendships, and nations, while love and goodwill strengthen even the weakest foundation.

As faithful Christians, we are offered countless opportunities each day to give thanks and gratitude to God for all His blessings. However, the New Year and the Birth of our Lord Jesus Christ are exceptional opportunities for retrospection, for us to take a moment to re-examine and re-evaluate our lives and to rejuvenate our spirits so that we may live a God-pleasing life.

This is what the mystery of Jesus' Birth proclaimed in the past.

This is what the Feast of the Birth of Jesus expects of mankind today and tomorrow.

On the joyous occasion of the New Year and the Glorious Birth and Epiphany of Christ, it is our prayer and wish that our Heavenly Father fill the hearts and lives of all with His blessings, keep mankind away from harm, and grant the Armenian nation and people well being and prosperity. On this blessed Feast, I extend my filial love to our Pontiffs, H.H. Karekin I, Catholicos of all Armenians, and H.H. Aram I, Catholicos of the Great House of Cilicia, wishing them health and many prosperous years. For the leaders of our homeland and the Armenian people I wish Divine guidance and wisdom in their service to our nation. Finally, I extend my blessings and wishes of health, peace, and prosperity to our clergy, Executive Council, parish Board of Trustees and delegates, educators, members of sister organizations, faithful parishioners, benefactors, and friends of our Prelacy.

***Happy New Year  
Christ is Born and Revealed  
Blessed is the Revelation of Christ***

Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
Western United States

New Year and Epiphany, 2007